# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2021/2

«5» 05 2021թ.

ք. Երևան

**Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը**, ի դեմս գործադիր տնօրեն **Արթուր Սողոմոնյանի**, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ **Պատվիրատու**), մի կողմից, և **«ՄԻՔՆԱՐ»ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **Գրիշա Բաղալյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ **Կատարող**), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Տեխնիկական հսկողության» ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով շինարարական աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **1 (մեկ) տարին**:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:[17]

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

---

[17] *Կրկնօրինակում է. նրան կնքվում է շինարարական ծրագրի կառուցման որոշի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:*

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **599,000 (հինգ հարյուր ինսունինը հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին

կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31

ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, ք.Իջևան,
Նալբանդյան 2

ՀՎՀՀ՝ 07616336
Հ/հ՝ 2476103531840000
Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ «Իջևանի» մ/ճ

Տնօրեն Գրիշա Ղազարյան

/ստորագրություն/

Կ.Տ

«5» 05 Հավելված N 1
2021թ. կնքված
ՀՇ-ԽԲՄ-ՇՁԲ-2021/2 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը* |
| 1 | 71351540 | ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի «Տավուշ բնակավայրի խմելու ջրագծի վերակառուցում» ծրագրի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն | դրամ | 599,000 | 1 | ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնք Տավուշ բնակավայր | Շինարարական աշխատանքների սկզբից մինչև ավարտ (Նախատեսվում է 270 օր) |
| *Ֆինանսավորման աղբյուր* | 2021թ. ՀՀ պետական բյուջե | | | | | | |
| *Պատվիրատու* | Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ | | | | | | |
| *Աշխատանքի տեսակը* | Ըստ ծավալաթերթ-նախահաշվի , որը կցվում է | | | | | | |
| *Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ* | • Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում բերված դրույթների՝ ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում (ընդ որում տեխնիկական հսկիչը պետք է ընդգրկված լինի Ծառայությունը մատուցողին տրված լիցենզիայի պատասխանատու անձանց ներդիրում: Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:<br>• Հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին<br>• Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը<br>• Ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պահանջներին<br>• Գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի<br>• Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար<br>• Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար<br>• Կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են անհրաժեշտ որակով և ծավալով<br>• Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը: | | | | | | |

| | |
|---|---|
| | տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր)<br>• Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը: |
| *Հաշվետվության ներկայացման պահանջներ* | • Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ **ընթացիկ և ավարտական հաշվետվություններ**, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր:<br>• ***Ընթացիկ հաշվետվությունները*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան, ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր):<br>***Ավարտական հաշվետվությունը*** պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով)<br>• ***Ընթացիկ հաշվետվությունները*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ:<br>• ***Ավարտական հաշվետվությունը*** ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում: |
| *Նորմատիվային պահանջներ* | Տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացնել համաձայն՝<br>• ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի<br>• Քաղաքաշինության նախարարի թիվ 44 ա.ո 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ հրամանի<br>• ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշման |

*Ծրագրի մեկնարկի մասին կտեղեկացվի գրավոր

Ծառայությունների մատուցման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները

**<< Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկակակն հսկողության իրականացում>>**

լիցենզիա, ըստ հետևյալ ոլորտի

| Չափաբաժինների համարները | | Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները). |
|---|---|---|
| 1 | | 2 |
| 1 | ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի «Տավուշ բնակավայրի խմելու ջրագծի վերակառուցում»<br>ծրագրի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն | Հիդրոտեխնիկական |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31

ՀՎՀՀ՝00846441

Հ/Հ՝ 900018001231

Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, ք.Իջևան , Նալբանդյան 2

ՀՎՀՀ՝ 07616336

Հ/հ՝ 2476103531840000

Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ «Իջևանի» մ/հ

Տնօրեն Գրիշա Բաղալյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
«5» 05 2021թ. կնքված
ՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2021/2 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1 | Տեխնիկական հսկողության ծառայություններ | .. | .. | .. | .. | 599,000 | 599,000 | 599,000 | 599,000 | 599,000 | 599,000 | 599,000 | 599,000 | **599,000** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31

ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, ք.Իջևան , Նալբանդյան
2

ՀՎՀՀ՝ 07616336
Հ/հ՝ 2476103531840000
Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ «Իջևանի» մ/ճ

Տնօրեն Գրիշա Բաղդասարյան

/ստորագրություն/

Կ.Տ

*Հավելված 3*
*« 5 » 05 20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ _____ |
| հվհհ _____ | հվհհ _____ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«5» 05 20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

# Տավուշի մարզ, Բերդ համայնքի, Տավուշի բնակավայրի ջրագիծ

## Ծավալաթերթ-Նախահաշիվ

| NN | NN | Աշխատանքների անվանումը | չ/մ | ծավալը | Միավորի արժեքը | Ընդամենը | Կշիռը% |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | **Բնակավայրի ջրամատակարարման ցանց** | | | | | |
| 1 | E1-961 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | մ³ | 2800,00 | | | |
| 2 | E1-1545 | 3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով կողիցք | մ³ | 90,000 | | | |
| 3 | E1-962 | 4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | մ³ | 2000,000 | | | |
| 4 | E1-1546 | 4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով կողիցք | մ³ | 1000,000 | | | |
| 5 | E1-940 | 5-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | մ³ | 90,000 | | | |
| 6 | E1-1547 | 5-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով կողիցք | մ³ | 510,000 | | | |
| 7 | E1-969 | Բնահողի ետիցք ձեռքով | մ³ | 5863,00 | | | |
| 8 | E1-969 | Ավելացած բնահողի հարթեցում տեղում ձեռքով | մ³ | 127,000 | | | |
| 9 | E1-1635<br>E1-1646 | Բնահողի հարթեցում տեղում բուլդոզերով, տեղափոխելով 10մ | մ³ | 500,000 | | | |
| 10 | E23-1 | Ասֆալտ նախապատրաստական շերտ պատրաստում H=10սմ | մ² | 486,000 | | | |
| 11 | E22-119 | Պոլիէթիլենային խողովակների տեղադրում Φ100x10մմ, փորձարկումով 16մթն | գմ | 7682,00 | | | |
| 12 | E22-314 | Խողովակաշարի լցացում վարակազերծումով D100մմ | կմ | 7,682 | | | |
| 13 | E22-64 | Պողպատե խողովակի տեղադրում Φ57x3մմ փորձարկումով | գմ | 65,000 | | | |
| 14 | E22-312 | Խողովակաշարի լցացում վարակազերծումով D50մմ | կմ | 0,065 | | | |
| 15 | 22-365 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում | հատ | 125,000 | | | |
| 16 | E22-66 | Պողպատե կցորդիչ խողովակի անցկացում պոլիէթիլենային խողովակով Φ108x4մմ L=0,5մ 32հատ | գմ | 16,000 | | | |
| 17 | E22-64 | Պողպատե կցորդիչ խողովակի անցկացում պոլիէթիլենային խողովակով Φ57x3մմ L=0,2մ 32հատ | գմ | 6,400 | | | |
| 18 | E15-647 | Խողովակների հակակոռոզիոն լաքապատում | մ² | 30,000 | | | |
| 19 | 22-384 | Պողպատե տոլնակի տեղադրում Φ100մմ | հատ | 2,000 | | | |
| 20 | 22-383 | Պողպատե տոլնակի տեղադրում Φ50մմ | հատ | 32,000 | | | |
| 21 | 22-429 | Պողպատե կցաշուրթի տեղադրում Φ50մմ | հատ | 16,000 | | | |
| 22 | 22-431 | Պողպատե կցաշուրթի տեղադրում Φ100մմ | հատ | 35,000 | | | |
| 23 | 22-383 | Վատնուց օդահան կցաշուրթով Φ50մմ | հատ | 64,000 | | | |
| 24 | 22-399 | Միացում գործող ջրագծին D108x108մմ / | տեղ | 2,000 | | | |
| 25 | E22-75 | Պողպատե կիսափողովակ 630x8մմ L=6մ 1հատ | գմ | 6,000 | | | |
| 26 | E22-446 | Երբ հավաքովի էլեմենտներից ջրամատակարարման կամ դիտահորի պատրաստում D1500մմ ծածկի սալով /2հատ/ | մ³ | 3,200 | | | |
| 27 | E22-446 | Երբ հավաքովի էլեմենտներից ջրամատակարարման կամ դիտահորի պատրաստում D1000մմ ծածկի սալով /32հատ/ | մ³ | 40,000 | | | |
| 28 | Գուկա | Ցուշե մտոց | հատ | 34,000 | | | |
| 29 | E9-46 | Գորի մետաղական ասոիճանի տեղադրում | տն | 0,225 | | | |
| 30 | E6-84 | Դիտահորի ամրացման մետաղական մասեր | տն | 0,865 | | | |
| 31 | 33-82 | Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղանկում | տն | 1,090 | | | |
| 32 | E6-5 | Բետոնե բարձիկի պատրաստում կիսափողովակի տակ B-15 դասի բետոնից | մ³ | 0,100 | | | |
| 33 | Գուկա | Պտուտակ իր մանեկով տոլնակների ամրացման համար | հատ | 136,000 | | | |
| 34 | E22-66 | Պողպատե խողովակի տեղադրում Φ108x4մ փորձարկումով | գմ | 427,000 | | | |
| 35 | E22-64 | Պողպատե խողովակի տեղադրում Φ25x3մ փորձարկումով | գմ | 20,000 | | | |
| 36 | E16-134 | Փականների տեղադրում Φ25մմ | հատ | 1,000 | | | |
| 37 | 22-383 | Պողպատե տոլնակի տեղադրում Φ50մմ | հատ | 16,000 | | | |
| 38 | 22-366 | Եռաբաշխիչ 100x50մմ | հատ | 31,000 | | | |
| 39 | 22-365 | Գոտի միացում 100x50մմ | հատ | 15,000 | | | |
| 40 | 22-365 | Կցորդիչ D50մմ L=0,2 կցորդիչով | հատ | 1,000 | | | |
| 41 | 22-365 | Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում 110մմ | հատ | 72,000 | | | |
| 42 | 22-365 | Պողպատե ծունկ 108մմ | հատ | 1,000 | | | |
| 43 | 22-365 | Մտցում պողպատ-պոլիէթիլեն 100x4մմ | հատ | 4,000 | | | |
| 44 | 22-365 | Ճկուն միացում 110մմ | հատ | 31,000 | | | |
| 45 | 22-365 | Կցորդիչ 100x50մմ, պողպատե կցորդիչով | հատ | 1,000 | | | |
| 46 | 22-365 | Ճկուն միացում 50մմ | հատ | 32,000 | | | |
| 47 | 22-365 | Ականց ազատ կցորդիչով 110մմ | հատ | 35,000 | | | |
| 48 | 22-365 | Ականց ազատ կցորդիչով 50մմ | հատ | 60,000 | | | |
| | | Ընդամենը | | | | | 96,29 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | **Կապտաժ** | | | | | |
| 1 | E1-966 | 4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով, փոսորակում | մ³ | 10,000 | | | |
| 2 | E1-940 | 5-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | մ³ | 4,000 | | | |
| 3 | E1-992 | 6-րդ կարգի բնահողի մշակում հետ-հարված մուրճով | մ³ | 3,000 | | | |
| 4 | 11-6 | Խճի նախապատրաստական շերտի պատրաստում | մ³ | 1,700 | | | |
| 5 | E6-22 | Միաձույլ ե/բ ժապավենային հիմքերի պատրաստում B-25 W6 դասի բետոնից | մ³ | 3,400 | | | |
| 6 | Տուկա | Ամրանի արժեքը A500c Φ10մմ դասի | տն | 0,640 | | | |
| 7 | E6-146 | Միաձույլ ե/բ պատերի պատրաստում B25 W6 դասի բետոնից | մ³ | 5,130 | | | |
| 8 | Տուկա | Ամրանի արժեքը A500c Φ10մմ դասի | տն | 1,026 | | | |
| 9 | E6-173 | Միաձույլ ե/բ ծածկի սալի պատրաստում B25 W6 դասի բետոնից | մ³ | 2,270 | | | |
| 10 | Տուկա | Ամրանի արժեքը A500c Φ10մմ դասի | տն | 0,454 | | | |
| 11 | 11-6 | Խճի շերտի պատրաստում /հիմքին ֆրանցիայի/ | մ³ | 3,600 | | | |
| 12 | E8-27 | Արտաքին պատերի մակերեսի և ծածկի ջրամեկուսացում 2 շերտ բիտումի քսուկով | մ² | 24,500 | | | |
| 13 | 9-34 | Մետաղական կափարիչի տեղադրում /ծխնիով, կախովի փականով/ հոր շրջանակով | մ² | 2,000 | | | |
| 14 | 9-123 | 50x50x5մմ անկյունակներից շրջանակի պատրաստում | տն | 0,021 | | | |
| 15 | Տուկա | 50x50x5մմ անկյունակի արժեքը | գմ | 5,600 | | | |
| 16 | E1-970 | 4-րդ կարգի բնահողի ետլիցք ձեռքով | մ³ | 6,000 | | | |
| 17 | E22-64 | Պողպատե խողովակ Φ50x3մմ ցանցի ջրաբաշխի և ավելցուկային ջրերի հեռացման համար | գմ | 15,000 | | | |
| 18 | 22-383 | Պողպատե տոպրակի տեղադրում Φ50մմ | հատ | 2,000 | | | |
| 19 | 22-429 | Պողպատե կցաշուրթի տեղադրում Φ50մմ | հատ | 4,000 | | | |
| | | Ընդամենը | | | | | |
| | | **Ցանկապատում** | | | | | 2,87 |
| 20 | E1-965 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | մ³ | 2,750 | | | |
| 21 | E1-968 | Բնահողի հարթեցում տեղում | մ³ | 2,750 | | | |
| 22 | E6-2 | Կեսային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից | մ³ | 2,750 | | | |
| 23 | 9-46 | Մետաղական ցանկապատի պատրաստում մետաղական էլեմենտներից /ներ թելում դռան/ | տն | 0,919 | | | |
| 24 | Տուկա | 51x3մմ մետաղական խողովակի արժեքը | գմ | 27,50 | | | |
| 25 | Տուկա | 40x40x4մմ մետաղական անկյունակի արժեքը | գմ | 248,00 | | | |
| 26 | Տուկա | Ամրանային ցանց 50x50x2մմ | մ² | 123,00 | | | |
| 27 | Տուկա | Ծխնի | հատ | 2,00 | | | |
| 28 | Տուկա | Կախովի փական | հատ | 1,00 | | | |
| 29 | E8-27 | Մետաղական հենապատերի ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումե քսուկով | մ² | 1,980 | | | |
| 30 | 15-614 | Մետաղական մասերի 2շերտ ներկում | մ² | 16,470 | | | |
| | | Ընդամենը | | | | | 0,84 |
| | | **Ընդամենը** | | | | | 100 |
| | | **ԱԱՀ** | 20% | | | | |
| | | **Ընդամենը ԱԱՀ-ով** | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀԿՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, ք.Իջևան ,
Նալբանդյան 2
ՀԿՀՀ՝ 07616336
Հ/հ՝ 2476103531840000
Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ,Իջևանի մ/ճ
Տնօրեն Գրիշա Բաղդասարյան
/ստորագրություն/
Կ.Տ